ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 12.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/30

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի 22.02.2018թ. բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/30 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն 22.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար դրոշների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը 08.02.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացած մասնակից:

Նույն արձանագրության 6.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 09.02.2018թ. հարցում է ներկայացվել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Գնահատող հանձնաժողովի 15.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի 1.1 կետի համաձայն՝ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.02.2018թ.) ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 105,854 ՀՀ դրամի չափով: Վերոգրյալով պայմանավորված և «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի հայտը:

Նույն արձանագրության 2.2 կետի համաձայն՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Թիմ սերվիս» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը ներկայացված բողոքով նշել, որ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությամբ արձանագրված՝ 105,854 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության աշխատակիցների կողմից 18.12.2017թ. իրականացրած հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման արդյունքում և 19.12.2017թ. ընկերությանն է ներկայացվել ստուգման

ակտի նախագիծ, որում մասնավորապես, արձանագրվել է, որ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի գործունեության հասցեում՝ Խորենացի 28-ում, կանխավճարի համար ՀԴՄ կտրոն տրամադրված չէ և առաջադրվել է օրենքով սահմանված պատասխանատվություն: 28.12.2018թ. «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ին է ներկայացվել է N 2140563 ակտը, որով նշանակվել է տուգանք 150.000 ՀՀ դրամի չափով՝ որից 105 000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք, և 45 000 ՀՀ դրամ որպես հարկային մարմնի զարգացման ֆոնդի գումար (միևնույն ժամանակ տվյալ պահին ընկերության ունեցած հարկային պարտավորությունների մասով գերավճարը կազմել է 44 211 ՀՀ դրամ): N 2140563 ակտի վճարման համար սահմանվել է ժամկետ՝ 10 օր:

«Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընկերությունը 09.01.2018թ. թիվ Պ-1/1 գրությամբ բողոք է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Վարդան Հարությունյանին, որով վիճարկել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 28.12.2017թ.-ի N2140563 ակտի իրավաչափությունը:

Ի պատասխան վերոնշյալ բողոքի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը 09.02.2018թ.-ին կայացրած 8/4 որոշմամբ անվավեր է ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 28.12.2017թ.-ի N2140563 ակտը:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12 ապրիլի 2016թ. N18-Ն հրամանով հաստատված՝ «Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգ»-ի համաձայն՝ բողոքը քննելիս՝ գանգատարկման հանձնաժողովը ղեկավարվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով:

Աշխատակարգի 22-րդ կետի համաձայն՝ գանգատների քննարկման արդյունքում գանգատարկման հանձնաժողովն իրավասու է ընդունելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածով, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 293-րդ հոդվածով սահմանված որոշումներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի համաձայն՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, բացառությամբ՝

ա) օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման.

բ) այն դեպքերի, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով:

«Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.02.2018թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 28.12.2017թ.-ի N2140563 ակտով դուրս գրված տուգանքի գումարի հետևանքով:

Այսպիսով, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 09.01.2018թ. ստանալով «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովին ուղղված բողոքը՝ պետք է առաջնորդվեր՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածով, այն է՝ կասեցներ բողոքարկվող վարչական ակտի (տվյալ դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 28.12.2017թ.-ի N2140563 ակտը) կատարումը՝ մինչև ՀՀ ԿԱ ՊԵԿ Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից որոշում կայացնելը:

Մինչդեռ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությամբ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ին 07.02.2018թ. օրվա դրությամբ վերագրվել է այնպիսի ժամկետանց հարկային պարտավորություն, որը առաջացել է դեռևս 09.01.2018թ. բողոքարկվող վարչական ակտի հիման վրա, ինչը հանդիսանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի խախտում:

Սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 09.02.2018թ.-ին կայացրած 8/4 որոշմամբ անվավեր է ճանաչվել ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 28.12.2017թ.-ի N2140563 ակտը:

Նման պայմաններում ստացվում է մի իրավիճակ, որ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն տրամադրելով եզրակացություն՝ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.02.2018թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի պահանջները և արդյունքում ներկայացրել այնպիսի եզրակացություն, որը չի համապատասխանել իրականությանը:

Արդյունքում, «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ին վերագրվել է վերահսկվող եկամուտների գծով այնպիսի ժամկետանց հարկային պարտավորություններ, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.02.2018թ.) գոյություն չեն ունեցել, քանզի եղել են բողոքարկված և կասեցված:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով երաշխավորված գնումների գործընթացին մասնակցության իրավունքը, ինչպես նաև նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, քանզի ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունենալով հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ, ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմքով զրկվել է օրենքով երաշխավորված գնման գործընթացին իր հետագա մասնակցության իրավունքից:

Ընկերությունը ներկայացված բողոքով խորհրդին խնդրել է՝

1. Դադարեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 15.02.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1-րդ կետով կայացրած որոշումը՝ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով:

2. Դադարեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 15.02.2018թ. թիվ 3 արձանագրության 2.2 կետով «Թիմ Սերվիս» ՍՊԸ-ին

ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

«Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 27.02.2018թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով Խորհրդին ներկայացված դիրքորոշումը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը

Երևանի քաղաքապետարանը ներկայացված բողոքի վերաբերյալ 05.03.2018թ. թիվ 02/61-14260 գրությամբ հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.02.2018թ. ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 07.02.2018թ. ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 105 854 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 15.02.2018թ. գնահատման նիստում որոշել է մերժել «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Թիմ սերվիս» ՍՊԸ-ին: Սակայն «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն 16.02.2018թ. ներկայացրել է ՀՀ ԿԱ

պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից տրամադրված տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 07.02.2018թ. դրությամբ հարկային պարտավորություններ չունի:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով ներկայացված տեղեկատվությունը՝ Երևանի քաղաքապետարանը «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի տվյալները չի ներկայացրել լիազորված մարմին:

Ամփոփելով վերագրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ է:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 27.02.2018թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ԳԲԽ-ԱՄ-2018/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2018/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար դրոշների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն:

2. Մրցույթի գնահատող հանձնաժողովը 08.02.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

3. Նույն արձանագրության 6.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին

վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 09.02.2018թ. հարցում է ներկայացվել << կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4. Գնահատող հանձնաժողովի 15.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի 1.1 կետի համաձայն՝ << կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.02.2018թ.) ունի << պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 105 854 << դրամի չափով, համաձայն որի Կարգի 44-րդ կետի համաձայն՝ մերժվել է «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի հայտը:

5. Նույն արձանագրության 2.2 կետի համաձայն՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Թիմ սերվիս» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

<< գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի 22.02.2018թ. բողոքը և Երևանի քաղաքապետարանի 05.03.2018թ. թիվ 02/61-142604 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» << օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը,***

բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար դրոշների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը 08.02.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացած մասնակից:

Պատվիրատուն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով 09.02.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտեի կողմից 13.02.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն 07.02.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 105 854 ՀՀ դրամի չափով:

Գնահատող հանձնաժողովը 15.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի 1.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը՝ մերժել է «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի հայտը:

Նույն արձանագրության 2.2 կետի համաձայն՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Թիմ սերվիս» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությամբ արձանագրված՝ 105 854 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է ՀՀ ԿԱ

ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության աշխատակիցների կողմից 18.12.2017թ. իրականացված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման արդյունքում, որի հիման վրա 28.12.2018թ. «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ին է ներկայացվել է N 2140563 ակտը, որով նշանակվել է տուգանք 150.000 ՀՀ դրամի չափով՝ որից 105 000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք, և 45 000 ՀՀ դրամ որպես հարկային մարմնի զարգացման ֆոնդի գումար: N 2140563 ակտի վճարման համար սահմանվել է ժամկետ՝ 10 օր:

«Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Ընկերությունը 09.01.2018թ. թիվ Պ-1/1 գրությամբ բողոք է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Վարդան Հարությունյանին, որով վիճարկել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 28.12.2017թ.-ի N2140563 ակտի իրավաչափությունը:

Ի պատասխան վերոնշյալ բողոքի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը 09.02.2018թ.-ին կայացրած 8/4 որոշմամբ անվավեր է ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 28.12.2017թ.-ի N2140563 ակտը:

Այսպիսով, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12 ապրիլի 2016թ. N18-Ն հրամանով հաստատված՝ «Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգ»-ի համաձայն՝ բողոքը քննելիս՝ գանգատարկման հանձնաժողովը ղեկավարվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով:

Աշխատակարգի 22-րդ կետի համաձայն՝ գանգատների քննարկման արդյունքում գանգատարկման հանձնաժողովն իրավասու է ընդունելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածով,

ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 293-րդ հոդվածով սահմանված որոշումներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի համաձայն՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, բացառությամբ՝

ա) օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման.

բ) այն դեպքերի, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով:

Վերոգրյալով պայմանավորված, Խորհուրդն արձանագրում է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.02.2018թ.) Ընկերությանը վերագրվող 105 854 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը, որը առաջացել էր դեռևս 09.01.2018թ. բողոքարկվող վարչական ակտի հիման վրա և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի համաձայն՝ համարվում էր կասեցված՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից 09.02.2018թ.-ին կայացրած 8/4 որոշմամբ ճանաչվել է անվավեր:

Ուստի նման փաստական հանգամանքներում Խորհուրդը գտնում է, որ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ վերջինիս կողմից չի խախտվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 22.02.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝

1. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 15.02.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3

արձանագրության 1.1-րդ կետով կայացրած որոշումը՝ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով:

2. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/17» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 15.02.2018թ. թիվ 3 արձանագրության 2.2 կետով «Թիմ Սերվիս» ՍՊԸ-ին ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ